

ու պատուելիները՝ Ունէին իրենց դիւղադնացութեանց, ուխտաւորութեանց, խրախճանութեանց, հարսնիքի և յուղարկաւորութեանց յատուկ եղանակներն որոշեալ: Ունէին դարձեալ իրենց սեպհական յառաջդիմական կամ յետադիմական կարծիքը, մատենադարանները, մառանները, հազուելու շքուելու տարազները, հւճար-
 քայտ-խէնքերն ու սիւպարեան փափկամուրութիւնները: Ունէին վերջապէս իրենց սիրած պատրիարքները՝ օրինակի համար «Աղաւնի» Ստեփանոս Պատրիարքը, Զուհաճեան Մատթէոս և փոքր ինչ Գեորգ Դ. կաթողիկոսները, որ իրենց մէկ քանիին ձեռքով կաթողիկոսացան՝ յուղարկուելով միծափառ հանդէսներով Տըփխիս և Էջմիածին: ունէին՝ ասոնց հետ՝ իրենց սեպհական ազնուապետական քահանաներն ու տիրացուները. ունէին դեռ շատ բաներ՝ իրենցը՝ և միայն էրէնցը:

Սեղանաւորներու այս դասակարգին մէջ՝ կը յիշուին նաեւ քսանեակ մը հայ-հոռոմներ, որպիսիներ շատ կային Անատոլուի մէջ՝ մանաւանդ Ակհի շուրջ դիւղերն ու մօտերը, թուի Եզր կաթողիկոսի ատենէն մնացած: Այս Հայ-հոռոմներէն կային Բիւթանիայի կողմերն ալ՝ մինչեւ 1850ը և կան ալ դեռ: Պոլիսի Հայ-հոռոմներուն մէջ յիշելի և ամիրապատիւ ոմե էր՝ այս դարին սկիզբն Անաստաս Ազան կամ Ամիրան, երեւելի իր հարստութեամբն ու աղղեցութեամբ, որ հայ լեզուի թարգմանել տուաւ յունական Եկեղեցիին արարողութիւնները¹ (իբր հայ՝ ազ-

1. շեռեւեալը՝ դուռն է այս Ամաստաս ամիրայիմ տպել տուած յունակրօմ և ճայալիզու մաշտոցիմ -

ՄԱՇՏՈՑ

Հատընտիր հաւաքմամբ հանեալ ի մեծ Մաշտոցէն յունաց որ կոչի

ԷՖՆՕԼՕՅԻՈՆ

Կորոզ թարգմանեալ և սրբազրեալ՝ աշխատասիրութեամբ Անաստասայ մեծ իմաստ վարժապետին յունաց և պատուելի Գրիգոր Դպրի Փեշտըմալճեան.